



ՍՈՒՐԲ ԶԵՆՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



ՅԻՄԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԻ

26 ՆՈՅԵՄԲԵՐ 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
«Ուխտին Տապանակը» (40)	Էջ 2
Ծանուցում	Էջ 4

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(1.1-10)**

Մենք՝ Պօղոս, Սիղոլանոս եւ Տիմոթէոս, կը գրենք ձեզի՝ թեսաղոնիկեցիներուն եկեղեցիին որ Հօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Շնորհք եւ խաղաղութիւն ձեզի:

Մեր աղօթքներուն մէջ միշտ կը յիշենք ձեզ եւ անդադար ձեզի համար գոհութիւն կը մատուցանենք Աստուծոյ: Հօր Աստուծոյ առջեւ միշտ կը յիշենք թէ ի՛նչպէս կեանքի կը վերածէք ձեր հաւատքը, սէրէն մղուած կը ծառայէք ուրիշներուն, եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յուսալով՝ նեղութիւններու կը համբերէք:

Եղբայրներ, գիտէք թէ Աստուած ձեզ սիրեց եւ ընտրեց, որովհետեւ մեր քարոզութեամբ Աստուած իր Աւետարանը յայտնեց ձեզի ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ զօրութեամբ, այսինքն Սուրբ Հոգիի ներգործութեամբ, եւ կատարեալ վստահութիւն ներշնչեց ձեզի: Դուք լաւ գիտէք թէ ձեր մէջ ի՛նչպէս ապրեցանք, ձեզի օրինակ ըլլալու համար: Մեզի նմանելով դուք Տիրոջ նմանած եղաք, քանի որ հակառակ ձեր կրած բոլոր նեղութիւններուն՝ Սուրբ Հոգիին պարգեւած ուրախութեամբ ընդունեցիք մեր քարոզութիւնը, եւ ձեր այդ ընթացքով օրինակ եղաք Մակեդոնիայի եւ Աքայիայի

բոլոր հաւատացեալներուն: Արդարեւ դուք ձեր օրինակով Տիրոջ խօսքը հռչակեցիք ո՛չ միայն Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ, այլեւ ամէն տեղ ուր Աստուծոյ վրայ ունեցած ձեր հաւատքին համբաւը տարածուեցաւ: Այնպէս որ այլեւս ո՛չ պէտքը կը զգանք բան մը աւելցընելու, ո՛չ ալ մենք մեզ ներկայացնելու, որովհետեւ ուր որ երթանք՝ մարդիկ իրենք մեր մասին կը պատմեն թէ ի՛նչպէս ձեզի եկանք եւ դուք կուռքերը ձգելով Աստուծոյ դարձաք՝ կենդանի եւ ճշմարիտ Աստուծոյ ծառայելու համար, եւ թէ ի՛նչպէս կը սպասէք որ երկիրքէն վերստին գայ Աստուծոյ Որդին Յիսուսը, որ Աստուած մեռելներէն յարուցանեց, եւ որ մեզ պիտի փրկէ գալիք բարկութենէն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(12.13-31)**

Ժողովուրդէն մէկը Յիսուսի ըսաւ. «Վարդապետ, ըսէ եղբօրս որ մեր Հօր ձգած ժառանգէն իմ բաժինս տայ ինծի»: Յիսուս պատասխանեց. «Ո՛վ մարդ, ո՞վ զիս դատաւոր կամ իրաւունքի բաժանարար կարգեց ձեր վրայ»: Ապա դառնալով ժողովուրդին, շարունակեց. «Նայեցէ՛ք եւ զգուշացէ՛ք ազահութեան բոլոր տեսակներէն, որովհետեւ մարդու մը կեանքը կախեալ է իր ամբարած հարստութենէն»:

Յիսուս անոնց առակ մըն ալ խօսեցաւ եւ ըսաւ.

«Հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին: Ան ինքնիրեն կը մտածէր ու կ'ըսէր. "Ի՞նչ ընելու եմ, որովհետեւ հունձքս ամբարելու համար շտեմարաններուն մէջ տեղ չմնաց: Այո՛, գիտեմ ինչ պիտի ընեմ: Պիտի

քակեմ շտեմարաններս, աւելի ընդարձակները պիտի շինեմ եւ հոն ամբարեմ ցորենս եւ ամբողջ բերքերս: Ապա ես ինծի պիտի ըսեմ.– Ո՛վ մարդ, քանի որ երկար տարիներու համար ամբարած հարստութիւն ունիս, հանգի՛ստ ըրէ՛. կե՛ր, խմէ՛ եւ ուրախացի՛ր»: Բայց Աստուած ըսաւ իրեն. «Անմի՛տ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ քեզմէ պիտի առնեն. որո՞ւն պիտի մնայ պատրաստածդ»»: Եւ Յիսուս եզրակացուց. «Նոյնն է պարագան բոլոր անոնց, որոնք միայն իրենց անձերուն համար հարստութիւն կը դիզեն, փոխանակ Աստուծոյ աչքին հարստանալու»:

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Մի՛ մտահոգուիք ձեր ապրուստին համար թէ ի՛նչ պիտի ուտէք, եւ ո՛չ ալ ձեր մարմիններուն համար թէ ի՛նչ պիտի հագնիք: Որովհետեւ կեանքը աւելի կարեւոր է քան ուտելիքը, եւ մարմինը աւելի կարեւոր՝ քան հագուստը: Դիտեցէք ազուանները, որոնք ո՛չ կը սերմանեն, ո՛չ կը հնձեն, ո՛չ շտեմարաններ ունին եւ ո՛չ ամբարներ, սակայն Աստուած կը կերակրէ զանոնք: Աստուած պիտի չկերակրէ՞ ձեզ, դուք՝ որ Աստուծոյ աչքին թռչուններէն գերազանց էք: Մտահոգուիլը ոեւէ ձեռով ձեր կեանքը կ'երկարէ՞: Եթէ նուազագոյն բանը չէք կրնար ընել, ինչո՞ւ ուրեմն ուրիշ բաներով կը մտահոգուիք: Դիտեցէ՛ք եւ տեսէ՛ք թէ ի՛նչպէս կ'աճի դաշտի շուշանը: Ո՛չ կը հիւսէ եւ ո՛չ ալ հագուստ կը կարէ: Հաւատացէք որ նոյնիսկ Սողոմոն իր ամբողջ փառքին մէջ անոնցմէ մէկուն պէս գեղեցիկ չկրցաւ հագնիլ: Եթէ Աստուած այդպէս աղուոր կը հագցնէ խոտը որ այսօր դաշտին մէջ է եւ վաղը կրակը պիտի նետուի, ձեզ աւելի լաւ պիտի չհագցնէ՞, թերահաւատներ: Հետեւաբար, մի՛ մտահոգուիք ո՛չ ձեր ուտելիքով եւ ո՛չ ալ ձեր խմելիքով: Մի՛ մտատանջէք դուք ձեզ, որովհետեւ ասոնք բոլորը հեթանոսներուն յատուկ են: Ձեր Հայրը գիտէ որ այդ բոլորին պէտք ունիք: Այլ, ուզեցէք որ Աստուծոյ արքայութիւնը գայ, եւ Աստուած այդ բոլորը աւելիով պիտի տայ ձեզի»:

«ՈՒԽՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ»
ԿՈՒԽԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԻՍԷ ԱՆԹԻՒԼԱՍ
ՓՈՒՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ԳԱՌՆԻԿ ԱԷ. Ք. Գ.

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՂԵՏԸ

3. է

Կիլիկիոյ Աղետին անմիջական արձագանգներէն է Սալհունի ծածկանուամբ⁵⁹⁹ վշտատուփ յօդուած մը, որ կը կրէ «Կիլիկիայի Կացութիւնը» վերնագրութիւնը: Անիկա գրուած է Մերսին, 21 Ապրիլ 1909-ին, եւ հրատարակուած ժամանակի 4/15 Մայիս 1909-ին թիւին մէջ (էջ 1-2): Կացութիւնը ամփոփող պատկեր մըն է: Արդ, ստորեւ յօդուածը՝ հատուածաբար.

«Կացութիւնը ամէն բառով, ամէն ձեռով, չափով, եթէ որակենք կշռենք, պիտի գտնենք ո՛չ թէ տարօրինակ այլ անօրինակ. ամէն օր նոր լուր, նոր դէպք, նոր քաղաքականութիւն, նոր շարժումներ կառավարական, խժոժական, աներեւակայելի, անպատմելի, հրատարակնուս վրայ կը վխտայ, կը պատկերանայ, բայց ամէնը՝ արդիւնք ծրագրուած, կանխաւ սարքուած, դժոխային մտածումի մը, որոնք այժմ կը գործուին շարունակական, ահաբեկիչ ու պակուցիչ:

Կիլիկիայի ամէն կողմէն ընդհանուր փճացումի աղմուկն է, որ կը լսենք տխուր իրողութեամբ միշտ ճշդուած: Բռնապետութեան ո՛չ հաւանական, այլ իրական վերադարձին բօթը եւ դժոխային գործերը խռովեալ սրտերը անբացատրելի յոյզերով ելեքտրականացուցին. ամբողջիսթիպատը⁶⁰⁰ իրջարաշուքէզէտներով շարժման մէջ է: Խտրութիւնը՝ բազմակողմանի երեսներովը եւ դիւային ժպիտովը աւեր կը փողհարէ. լարուած ձգտումները միայն մէկ հոսանքի մը ենթակայ կը յորդին այս օրերուս՝ հո՛ն, ուր ջնջել, իսպառ հետք չթողուլն է կեանքին⁶⁰¹ ու քեաֆիրին⁶⁰². վտանգին կատարումը եւ տա-

կաւին շարունակման սպառնալիքները (...)

(...) անջնջելի պարսաւանացքուէն տանք Սահմանադրութեան, որ չկրցաւ կառավարութեան դեկը յանձնել այնպիսիներուն, որոնք վարէին, կառավարէին ամբողջ մոլեգին, որ անգիտակ՝ երկիրը նիւթական ու բարոյական այնպիսի վնասներու կ'ենթարկէ, եւ գուցէ օր մը չի կրնայ անհաշիւ ու կեղծ քաղաքագիտութեամբ գալիք սաստիկ ու վերջին հարուածէն ազատելու. թուրք մամուլին եւս պարսաւանքէն է՛ն խոշորը, է՛ն ուժգինը, որ շարունակ երկմիտ, թեթեւամիտ, երեւուն գաղափարներով մէկ կողմէն միւսը թեւ կու տար եւ շօվինիզմի երկրաւեր ու ցախաւեր տիւտիկը կը հնչէր (...)

(...) Սահմանադրութիւնը ո՞ւր է... Ապրիլ 1-էն ի վեր Կիլիկիան արիւններու մէջ կը լողայ, հրդեհներու մէջ կը խանձի, աւարներու տնաւեր քանդումին մէջ կը փճանայ (...)

(...) Ատանան ամբողջովին փճացաւ. 4000 տուն, այրած եկեղեցի եւ բոլոր դպրոցներ՝ հրոյ ճարակ եղած, շուկան նմանապէս, գործարաններ, ագարակներ, այգիներ, փէզուիթի դպրոց եւ նաեւ անխտորէն քրիստոնէից տուն, հանրային շէնքեր, մարդու կորուստը անհաշուելի է, Ատանան աւեր դաշտի մը երեւոյթը առած է, ինքզինք կրցող ազատողը Մերսին, Կիպրոս ինկած է, 1000 է թիւը Կիպրոս գացողներուն, որոնք օրուան հացին կը կարօտին, ուրիշ վայրեր ալ գացողներ կան⁶⁰³, իսկ գիւղերու մէջ եւ ճամբաներու վրայ սպաննուածներուն թիւն ալ շատ է. որբեր կան կորսուած, կոյսեր կան յափշտակուած, բռնաբարումի տեսակն ու քանակը անհաշուելի է. սպանեալներէ շատերը վերջն ալ խժգուժ կերպով կտրուած են խյմա, խյմա⁶⁰⁴, ուրիշներ այրեր են կիսովին. հրէշային ամէն մտածում կենդանիներուն ու դիակներուն վրայ ալ գործուեր են, ու կառավարութիւնը ամէնին չէ թէ հանդիսատես, այլ գրգռողը՝ աֆերիմ, օղլուլարը⁶⁰⁵ ըսողն եղեր է, եւ մեր գինուոր եղբայրներն ալ փոխան օտար թշնամիի դէմ գահրըման ըլլալու⁶⁰⁶, անգէն այրերու, կիներու ու կոյսերու դէմ մարդկութեան յաւատարատ բերող գահրըմաններ եղած են!!! (...)

(...) Ատանայի կառավարութիւնը սա մարդախողող, ճիւղալային գործերովը դեռ չյագեցած, հիմակ ալ տեսած հայ տղամարդը առանց հարցաքննելու եւ ինչո՞ւ, քանի ոչխարի պէս չմորթուեցաւ... ու ահա ծակը կը թիւնէ, շղթայի կը գարնէ, ասով ալ չբաւականանար, Սիս, Մերսին կոշտ կոպիտ բոլիսներ կ'ողարկէ եւ Ատանացի

եղողը կը ձերբակալէ ու կը տանի կեդրոնը, ըսել տալու համար, թէ ասոնք են պատճառը Ատանայի դէպքին (...)

(...) եւ սպասել ու յուսալ, թէ թուրքիան պիտի վերակենդանանայ, որչափ միամտութիւն Աստուած իմ, 20,000 ժողովուրդ բոլորովին բացն է թաց հողին, արեւին տակը գիշերը ցրտին, օրական 30-40 զոհ կու տայ, ու ցորեկն ալ գինուորին ու մոլեռանդի ծաղրանքին ու վաւաշտո նայուածքին առարկան է, անօթութիւնը ծայր աստիճան, իսկ մերկ անանկողին մնալը շատ որոշ, մանուկներու հիւանդութիւնը սուրին պակասը կը լեցնէ, փառաւորներու հրաման մը կարծես՝ հայուն մանչ զաւակը չապրի (...)

Չորք Մէրգմէնէն զատ Ատանայի գազանները⁶⁰⁷ լմնցած են, գիւղերը արտերու վերածուած են (...)

(...) նոր կայսրերնուս շնորհն ալ չտեսանք (...)

(...) Անշուշտ Ահմէտ Ռեզա պէյն ալ արգիւնքը կը տեսնայ իր խօսածներուն՝ երբ լսելի ընել կու տար, որ եթէ հայերը խելօք չկենան՝ կը ջարդուին: Չենք հասկնար ի՞նչ ըսել է խելօք կենալ, գառնուկի պէս մորթուիլ, կոյս աղջիկներ բռնի տարուելուն մէջ ձայն չհանել, կողոպտուիլ, հրդեհուիլ ամէնը ընդունիլ ու կրկին մուսջ կենալ (...)

(...) Այսօր 25,000 կարօտեալներ կերակրելու, բնակեցնելու հոգը կայ (...) կը սպասենք օգնութեան, կառավարութեան բարեհաճ տնօրինութեան ու պատճառ եղողներու պատժումին»:

(Շարունակելի 40)

Ա.Ղ.ԲԻԻՐՆԵՐ ԵՎ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

599.- Անձնօք է այս ստորագրութիւնը: Արդեօք Սիմոն Գաբամանեանն է, որ գրած է «Թէոդոր Սալիուհի կամ Քրիստոնեայ Նահատակը» ողբերգութիւնը:

600.- Իսրիպատ. միաեծան իշխանութիւն: Ակնարկութիւն համիտեան իշխանութեան:

601.- Կեաւուր. անհաւատ: Թուրքին համար քրիստոնեան, այս շրջագիծին մէջ հայը՝ կեաւուր մըն էր:

602.- Քեաֆիր. հայիոյիչ: Թուրքին համար քրիստոնեան, այս շրջագիծին մէջ հայը՝ նշմարիտ կրօնքին, այսինքն՝ իսլամութեան հայիոյիչ մըն էր:

603.- Այն օրերու մամուլը թղթակցութիւններ եւ խմբագրականներ ունի, որոնք իրենց տեղերէն սարսափահար փախչածներուն եւ հեռացածներուն մասին են: Խմբագրականները միաժամանակ կոչեր են մնացողներուն՝ չձգելու պապեակաւ յարկերը, իսկ փախչածներուն եւ հեռացածներուն՝ վերադառնալու:

- 604.- Խյմա. մսաղոյթ:
- 605.- Աֆերիմ, օղլուլարըմ. Ապրի՛՛՛, տղաներս:
- 606.- Գահրըման ըլլալ. փաշայաղթ ըլլալ:
- 607.- Գագա. գաւառ:



ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Հովանավորությամբ՝
Գանատայի Հայոց թեմի Առաջնորդ
Գերշ. Տ. Բարգևն Արք. Չարեանի

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ՝
«ԹԱՔՆՈՒԱԾ ԳԱՆՁԴ ԳՏՆԵԼ՝
Լուռ Աղօթքի Ճամբան»
գրքին

Հեղինակ՝ Պենինիոս ՕՐուրք
Թարգամանիչ Կարո Սրկ. Նոխուտեան

Գիրքը կը ներկայացնէ
Գերայ. Գեղարդ Ծ. Վրդ. Գիւսպէկեան

Կիրակի, 26 Նոյեմբեր 2017-ի երեկոյեան ժամը 7.00
Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Ահարոնեան» սրահ

Հրատէր՝ բոլորին